Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (2 մասնագետ՝ 23 դասաժամ, ռուսերենով ուսուցմամբ դասարաններում), երաժշտության (12 դասաժամ, ցանկալի է առարկան ռուսերենով դասավանդելու իմացություն), կերպարվեստի (16 դասաժամ, ցանկալի է առարկան ռուսերենով դասավանդելու իմացություն), ասորերեն լեզվի և գրականության (25 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են

թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 6-ից մինչև ապրիլի 19-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. ապրիլի 21-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գ. Արզնի, 8-րդ փող., շենք 13:

Տեղեկությունների համար զանգահարել (0222)9-46-53, (094)14-55-05 հեռախոսահամարներով: